Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

BY NC SA

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավաբանություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

8478

ИБ

331.1
4-94

1932

დადგენილება სარეწაო კოოპერატიულ ამხანაგობებში (არტელებში) საწარმოო-საამხანაგო სასამართლოების მოწყობის შესახებ

საქ. სსრ სახალხო კომისართა საბჭოს და ეკონომიური საბჭოს საქმეთა მმართველობის გამოცემა.

48

Библиотека Института Востоковедения Академии Наук СССР

# ՎՈՐՈՇՈՒՄ

## ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ (ԱՐՏԵԼՆԵՐՈՒՄ) ԱՐՏԱԴՐԱԿԱՆ-ԸՆԿԵՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Համայն Վրաստանի Կենտրոնական Գործադիր Կոմիտեի յեվ ՎՍԽՀ ժողովրդական կոմիսարների խորհրդի 1932 թ. ապրիլի 13 վորոշումը (ՎՍԽՀ Ո. Ժ. 1932 թ. № 15, հոդ. 125)]:

*Մեծ չափերով գրավելու նպատակով արհեստագործական կոոպերատիվ ընկերությունների (արտելների) անդամների լայն մասսաների հասարակական ինքնագործունեությունը աշխատանքային կարգապահության խախտումների դեմ պայքարի գործում, արհեստագործական կոոպերացիայի ձեռնարկություններում արտադրական կազմալուծողների, նաև հին կենցաղի մնացորդ ներկայացնող մանր զանցառությունների դեմ պայքարի ասպարեզում, համայն Վրաստանի Կենտրոնական գործադիր կոմիտեն և Վրաստանի ՍԽՀ ժողովրդական կոմիսարների Խորհուրդը վորոշում են՝*

*1. Բոլոր արհեստագործական կոոպերատիվ ընկերություններում (արտելներում) թե նրանք, վորոնք կատարում են աշխատանք ձեռնարկություններում և ընկերության (արտելի) ընդհանուր արհեստանոցներում, թե նրանք, վորոնք միավորում են տանը աշխատող իր անդամներին, յեթե նրանք, առնվազն 30 անդամ ունեն, կազմակերպում են արտադրական-ընկերական դատարաններ:*

*ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. 1: Քննելու համար այնպիսի գործեր, վորոնք ծագում են ընկերություններում (արտելներում), վորոնք իրենց կազմի մեջ ունեն 30-ից պակաս անդամ, կարելի յե կազմակերպել միացյալ արտադրական-ընկերական դատարան սպասարկելու համար մի քանի այդպիսի ընկերություններ և արտելներ:*

*ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. 2: Այն ընկերությունները (արտելները), վորոնք ունեն մի քանի արտադրական ձեռնարկություններ՝ առնվազն 30 անդամ յուրաքանչյուրում՝ զանազան տեղերում (քաղաքներում, գյուղերում), կարող են կազմակերպել արտադրական-ընկերական դատարաններ՝ յուրաքանչյուր ձեռնարկության մեջ:*

2001

010

331 |
Վ-94



2. Արտադրական-ընկերական դատարանները ընտրվում են ընկերության (արտելի) անդամների և ծառայող-հարվածայինների թվից ընկերության (արտելի) ընդհանուր ժողովներում (լիազորների ժողովներում) ընկերության ծառայողների մասնակցությամբ հետևյալ կազմով՝ մի նախագահ, մեկ կամ յերկու նախագահի տեղակալ և արտադրական-ընկերական դատարանի անդամներ՝ (ընկերությունը 100-ից ավելի անդամ ունենալու դեպքում—առնվազն 10 հոգի, 100-ից պակաս անդամ ունենալու դեպքում—առնվազն 3 հոգի։ Դատարանի անդամների թիվը վորոշում է տվյալ ընկերության (արտելի) ընդհանուր ժողովը (լիազորների ժողովը)։

Արտադրական-ընկերական դատարանի դատավորները ընտրվում են մի տարի ժամանակով։ Արհեստագործական կոոպերատիվ միությունը, վորի կազմի մեջ մտնում է արտադրական-ընկերական դատարան կազմակերպող արհեստագործական ընկերությունը (արտելը), իրավունք է վերապահվում բացամերժել դատարանի ընտրած ամբողջ կազմը կամ նրա առանձին անդամներին։

Արտադրական ընկերական դատարանի նախագահը, նրա տեղակալները և անդամները կարող են ժամանակից առաջ հետ կանչվել ընտրողների կողմից, յեթե նրանք չեն արդարացնում ընտրողների վստահությունը։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ։ Արտադրական-ընկերական դատարանի անդամները արտադրական-ընկերությունում իրենց տարած աշխատանքի համար վարձատրություն չեն ստանում։

3. Արտադրական-ընկերական դատարանները իրենց հանձնած խնդիրների համաձայն քննում են գործեր՝

ա) աշխատանքային կարգապահության խախտումների մասին, ինչպես օրինակ, աշխատանքի չգալը, աշխատանքից հաճախ ուշանալը, աշխատանքի գալը հարբած դրությամբ և այլն.

բ) դեպի կոոպերատիվի գույքը (մեքենաները, գործիքները, նյութերը, շենքերը և այլն) սիստեմատիկ անփույթ վերաբերմունքի մասին.

գ) խոտանք թույլ տալու մասին սահմանային նորմից դուրս.

դ) արտադրական նորմաներ չկատարելու մասին, վորը սահմանած է թե տանը, թե արհեստանոցում աշխատող անդամների համար.

ե) խոսքով, գրավոր և գործողությամբ հասցրած վիրավորանքի մասին, սուտ խայտառակող տեղեկություններ տարածելու, գանահարությունների մասին առանց մարմնական վնասվածք հասցնելու։

զ) ձեռնարկության կամ կազմակերպության տերրիտորիայի վրա ընկերության (արտելի) անդամներից կամ ծառայողներից պարզ գողության մասին, նմանապես ընկերությանը (արտելին) պատկանող նյութեր և գործիքներ գողանալու մասին՝ 50 ռուբ. վոչ ավելի արժողությամբ.

ZUUR-Ադմ.ՍՍՀ
Ա. ՄԱՍՆԻԿՅԱՆ
36167-66

Ca 34-Л
887
БИБЛИОТЕКА
ИНСТИТУТ
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР



է) պարզ սրիկայության մասին, այսինքն անգամ, հասարակության ակնհայտնի անհարգանք արտահայտող գործողության, հասարակական կոլեկտիվի պահանջներին չհամապատասխանող վարքի մասին, վորը արտացոլում է կենցաղի բացասական կողմերը.

ը) 50 ռ. վոչ ավելի ստացվածքային վնասների մասին։

4. Արտադրական-ընկերական դատարանները քննում են 3-դ հոդվածում նշած գործերը.

ա) յերբ այս գործերում կողմեր են հանդիսանում արտադրական-ընկերական դատարան ունեցող միևնույն քաղաքի և նրա ռայոնի զանազան արհեստակցական կոոպերատիվ ընկերության (արտելի) անդամները և ծառայողները և նրանց ընտանիքի անդամները.

բ) յերբ այս գործում կողմեր են հանդիսանում արտադրական-ընկերական դատարան ունեցող միևնույն քաղաքի և նրա ռայոնի զանազան արհեստակցական կոոպերատիվ ընկերությունների անդամները և ծառայողները.

գ) յերբ 50 ռ. վոչ բարձր հայցերը ուղղված են ընկերությունների (արտելների) առանձին անդամների և ծառայողների դեմ թե տվյալ ընկերության (արտելի) վարչության կամ հասարակական կազմակերպությունների կողմից, թե այլ կազմակերպությունների կողմից, վորոնց վարչությունը գտնվում է այս քաղաքի կամ ռայոնի տերրիտորիայի վրա, վորտեղ տվյալ ընկերությունը (արտելը) կազմակերպված է։

5. Արտադրական-ընկերական դատարանների քննության չեն յենթարկվում՝

ա) ընկերության (արտելի) անդամի և ծառայողի մեջ մի կողմից և վարչական-տեխնիկական կազմի պատկանող անձի մեջ մյուս կողմից ծագող գործերի այնպիսի հարաբերություններից, վոր անմիջապես բխում են նրանց աշխատանքից ձեռնարկությունում, նաև ընկերության (արտելի) ստորադրյալ և վերադաս պաշտոնատար անձանց մեջ.

բ) պարենագրային և աշխատանքային հայցերը՝

3-դ հոդ. «ա», «բ», «գ» և «դ» կետերում նախատեսված գործերը, նույնպես ընկերությանը (արտելին) պատկանող նյութերի և գործիքների գողության գործերը քննվում են արտադրական-ընկերական դատարաններում, միայն այն դեպքում, յերբ այդ գործերը հանձնում է արտադրական-ընկերական դատարանին ինքը վարչությունը կամ չի առարկում այս գործի քննության դեմ դատարանում, յեթե այդ գործերը հարուցել են հասարակական կազմակերպությունը կամ ընկերության (արտելի) անդամը կամ ծառայողը։

Յեթե արտադրական-ընկերական դատարանը գտնում է, վոր գործը իրեն յենթակա չէ, կամ թեև յենթակա է, բայց բարդ է իր բնույթով կամ պահանջում է ներգործության ավելի խիստ միջոցների կիրառում զանցանքի վերաբերյալ, քան այդ թույլ է տալիս սույն վորոշումը, նա հանձնում

50725 - Ա. 1.

է գործը ժողովրդական դատարանին ընդհանուր յենթակայության կարգով քննելու համար։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ։ Արտադրական-ընկերական դատարանի բոլոր հասարակական կազմակերպությունների կամ բանվորների ու ծառայողների կողմից հարուցած գործերի մասին, վոր նշած են սույն հոդվածի յերկրորդ մասում, անհապաղ հաղորդում է վարչությանը և կարող է գիմել նրանց քննությանը միայն այն դեպքում, յերբ ծանուցումից հետո յերեք որվա ընթացքում վարչությունը չի առարկում այս գործերը արտադրական-ընկերական դատարանում քննելու դեմ։

6. Շահագրգռված անձինք կամ հասարակական կազմակերպությունները արտադրական-ընկերական դատարաններում գործերը հարուցում են բանավոր թե գրավոր հայտարարություններով։

7. Գործերը քննվում են այն ընկերության (արտելի) արտադրական-ընկերական դատարանում, վորտեղ աշխատում է պատասխանատուն կամ հանցանք գործած անձը։

8. Այն դեպքում, յերբ հանցանք գործած անձի արարքի մեջ, վորը յենթակա յե արտադրական-ընկերական դատարանին, պարունակվում են վորևե հանցանքի նշաններ, ամբողջ գործը պետք է հանձնվի համապատասխան ժողովրդական դատարանի քննությանը։

9. Արտադրական-ընկերական դատարանի աշխատանքը չի կաշկանդված դատավարության վորևե ձևական կանոններով բացի այն կանոններից, վոր գտնվում են սույն վորոշման մեջ։ Դատավարությունը արտադրական-ընկերական դատարաններում ազատ է ամեն տեսակ դրամական և այլ տուրքերից։

10. Արտադրական-ընկերական դատարաններում գործերը քննվում են դռնբաց։ Նիստը կազմում են նախագահը, կամ նրա տեղապահը և դատարանի յերկու անդամը, վորոնք հրավիրվում են նիստի հերթով։ Նիստի որեր և ժամերը վորոշում է արտադրական-ընկերական դատարանը այնպիսի հաշվով, վոր նիստին մասնակցողները յետ չմնան արտադրության աշխատանքից։

Արտադրական-ընկերական դատարանում գործերը պետք է քննվեն վոչ ուշ քան 5 որվա ընթացքում գործը ստանալուց հետո։

Արտադրական-ընկերական դատարանների տեխնիկական սպասարկումը իրագործում է ընկերության (արտելի) ապարատը։

11. Արտադրական-ընկերական դատարանի ամբողջ կազմի, կամ առանձին անդամների դեմ կարելի յե ներկայացնել պատճառաբանված բացարկ գործի քննությանը մասնակցելու մասին։

12. Արտադրական-ընկերական դատարանը պարտավոր է կանչել գործի քննությանը գանգատավորին, պատասխանատուին կամ հանցանք գործողին,



լսել նրանց բացատրությունները, անհրաժեշտության դեպքում հարցաքննել վկաներին, կատարել տեղական զննություն և միջոցներ ձեռք առնել բազմակողմանի և լիակատար կերպով պարզելու գործը։

Մինչև վճիռ հանելը արտադրական-ընկերական դատարանը կարող է թույլ տալ ընկերության (արտելի) ներկա յեղող անդամների և ծառայողների մեջ մտքերի փոխանակություն։

Յեթե գործին մասնակցողները, ստանալով ծանուցում, չեն ներկայանում դատարանին, դատարանը գործը հետաձգում է չներկայացողներին կանչելու համար, կամ գործը քննում է նրանց բացակայությամբ կամ կարճում է։

13. Արտադրական-ընկերական դատարանների վորոշումները կայանում են դատարանի կազմի ձայների մեծամասնությամբ, կարճ կերպով շարադրվում են գրավոր և հրապարակապես հայտարարվում են գործին մասնակցողներին։

14. Հանցանք գործողների վերաբերյալ արտադրական-ընկերական դատարանները կիրառում են ներգործության հետևյալ միջոցները՝

ա) նախազգուշացում.

բ) հասարակական պարսավանք հրապարակելով կամ առանց հրապարակելու պատի թերթի կամ ընդհանուր մամուլի մեջ, կամ գրելով սև տախտակի վրա.

գ) տուգանք 10 ռուբլուց վոչ ավելի հօգուտ հասարակական կազմակերպությունների (Օսո-ավիաքիմ և այլն).

դ) պարտավորություն՝ հատուցանել պատճառած ստացվածքային վնասը, յեթե վնասը 50 ռ. ավելի չէ։

յե) հարց դնել ընդհանուր ժողովի (լիազորների ժողովի) առաջ զրկել ընկերության (արտելի) անդամությունից այն պատճառաբանությամբ, վոր թվարկած է ընկերության (արտելի) կանոնագրի մեջ, իսկ ընկերության (արտելի) ծառայողների նկատմամբ վարչության առաջ հարց դնել նրանց արձակելու մասին՝ աշխատանքի որենսգրքում սահմանած պատճառաբանությունով.

զ) հարց դնել արհեստակցական միության համապատասխան մարմնի առաջ զրկել արհեստակցական միության անդամությունից.

է) տեղափոխել մատակարարման բարձր խմբակից ստորին խմբակը, վոչ ավելի քան 3 ամիս ժամանակով։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. «գ» կետում նշած ներգործության միջոցը դատարանը կարող է նշանակել իբրև ներգործության լրացուցիչ միջոց։

15. Արտադրական-ընկերական դատարանի վորոշումները վերջնական են, բողոքարկման յենթակա չեն և ի կատար են ածվում անհապաղ։

16. Յեթե արտադրական-ընկերական դատարանի վորոշումները չեն կատարվում կամավոր կերպով տուգանք կամ դրամական գանձումներ վճարելու նկատմամբ, այս գանձումները կատարում է ընկերության (արտելի) վարչությունը անդամի կամ ծառայողի աշխատավարձից, պահպանելով ՎՍԽՀ դատավարական օրենսգրքի կանոնները. արտադրական-ընկերական դատարանին վերապահվում է իրավունք սահմանել տուգանքի և այլ դրամական գանձումների մաս-մաս վճարումը:

17. Արտադրական-ընկերական դատարանների գործունեյության հսկողությունը իրագործում են ժողովրդական դատարանը և դատախազությունը: Ժողովրդական դատավորը ինքնուրույն կերպով կամ դատախազի բողոքի հիման վրա ա) հայտնաբերելով արտադրական-ընկերական դատարանում այս դատարանին չենթակա գործ կամ բ) նկատելով արտադրական-ընկերական դատարանի վորոշման մեջ իրավասությունից անցնելը կամ օրենքի եական խախտում կամ գ) համարելով գործը թեև յենթակա արտադրական-ընկերական դատարանին, բայց բարդ իր բնույթով կամ իր հասարակական նշանակությամբ պահանջող ներգործության ավելի խիստ միջոցների կիրառում դեպի դանցառուն, քան այդ թույլ է տրված նույն վորոշման 14-դ հոդվածով, հանում է գործը արտադրական-ընկերական դատարանի դատավարությունից, կասեցնելով վերջինիս վորոշման ի կատար ածումը և տանում գործը իր քննությանը:

18. Արտադրական-ընկերական դատարանների ղեկավարությունը իրագործում է Վրաստանի ՍԽՀ գերագույն դատարանը և արհեստագործական կոոպերացիայի Համավրացական Միությունը (Սարեցառ-Կավշիրի)։

ՀՍՍՌ ԳԱ ԲԻԲԼԻՈՏԵԿԱ
ZUQR-Арм.ССР
им. А. Мясникяна
ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎ.

მხ. მ. ს. ჭ. პოლიგრაფტრესტის 1-ლი სტამბა
შეკ. № 1851 მთავლიტი № 1242 ტირ. 200.

Библиотека Института Востоковедения Академии Наук СССР

24, 1248

С 34-Л / а887

Библиотека Института Востоковедения Академии Наук СССР

331.1 / 4-94

2013

ՀՀ Ազգային գրադարան

NL0041559